

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«---» ----- 2017թ.

N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

**ՆԵՐՍԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության **1999** թվականի օգոստոսի **31**-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N **551** որոշմամբ հաստատված կարգի **2**-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն ՀՀ ժողովրդական արտիստ, կինոռեժիսոր Ներսես Հովհաննիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Բուզանդի փողոց հ. **30** հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՆԵՐՍԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՑԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱՆՔՍԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ժողովրդական արտիստ, կինոռեժիսոր Ներսես Հովհաննիսյանը ծնվել է **1938թ.** հոկտեմբերի **12-ին** Երևանում: Ավարտել է Երևանի **հ. 58** ռուսական դպրոցը և մինչ ինստիտուտ ընդունվելն աշխատել է Գաբրիել Մունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում:

1953թ. ավարտել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետը: **1959թ.** աշխատել է «Հայֆիլմ» կինոստուդիայում՝ որպես ռեժիսորի օգնական, ապա՝ ռեժիսոր: **1966-1967թթ.** աշխատել է «Մոսֆիլմ» կինոստուդիայում, որտեղ եղել է Յ. Ռայզմանի «Քո ժամանակակիցը» ֆիլմի ռեժիսորի օգնականը:

Որպես դերասան նկարահանվել է մի շարք ֆիլմերում՝ «Ապրեք երկար» (**1979թ.**), «Խոշոր շահում» (**1980թ.**), «Վերջին կիրակի» (**1986թ.**), «Մենավոր ընկուզենի» (**1987թ.**), «Անառակ որդու վերադարձը» (**2007թ.**) և այլն:

Նկարահանել է բազմաթիվ ֆիլմեր, որոնցից են՝ «Հանդիպում ցուցահանդեսում» (**1968թ.**), «Ձախորդ Փանոս» (**1969թ.**), «Հարսնացուն հյուսիսից» (**1975թ.**), «Խոհարարները եկել են մրցույթի» (**1977թ.**), «Թոփչքը սկսվում է գետնից» (**1980թ.**), «Երջանկության մեխանիկա» (**1982թ.**), «Օտար խաղեր» (**1986թ.**) և այլն:

1983թ. «Երջանկության մեխանիկա» ֆիլմի համար արժանացել է ՀՀ կառավարության մրցանակին: Եղել է նաև մի քանի ֆիլմերի սցենարի հեղինակ: «Михаил Калатозов. Путь к себе» ֆիլմի համար Արվեստի մասին ֆիլմերի միջազգային փառատոնում արժանացել է Լուսինե եղբայրների անվան բրոնզե մեդալի:

Ներսես Հովհաննիսյանը եղել է «Բումերանգ» երգիծական կինոալմանախի գեղարվեստական ղեկավարն ու գլխավոր խմբագիրը, հանդիսացել է կինոստուդիայի ղեկավարության ու Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության անդամ:

1987թ. նա արժանացել է Հայաստանի արվեստի վաստակավոր գործչի կոչման, **2013թ.**՝ «Հայակ» ազգային կինոյի մրցանակաբաշխության Հատուկ մրցանակի:

Ներսես Հովհաննիսյանը մահացել է **2016թ.** Մոսկվայում:

ՀՀ ժողովրդական արտիստ Ներսես Հովհաննիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Բուզանդի փողոց **հ. 30** հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության նախագահ Ռ. Գևորգյանցի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության **1999** թվականի օգոստոսի **31-ի** «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N **551** որոշմամբ հաստատված կարգի **2-րդ** կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՆԵՐՍԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՍ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Ներսես Հովհաննիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՆԵՐՍԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՍ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Ներսես Հովհաննիսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ